ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
Պակիստանի բելուջիստանյան քաղաքականության խզումները

ՌԱՋԿՈՒՄԱՐ ՍԻՆԳՀ
Բ. Ն. Մանդալի համալսարան, Հնդկաստան

Բելուջիստանն աստիճանաբար հայտնվում է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, քանզի Պակիստանի կառավարության հետ հարաբերություններն ավելի են լարվում: Նահանգի ազգայանական ուժերը երբեք չեն ընդունել 1947-1948թթ. տարածքի բռնի ինտեգրումը Պակիստանի կազմ, և այդ շրջանից սկսած բելուջներն իրենց հողն անվանում են օկուպացված: Դա հանգեցրել է Պակիստանի դեմ խռովությունների 1950-ական, 1960-ական և 1970-ական թվականներին: Պայքարի ներկայիս փուլը, որում ավելի ընդգծված է անկախության համար մղվող շարժումը, սկսվեց 2004թ. և շարունակվում է առ այսօր: Բելուջիստանը աղքատ նահանգ է, որը հարուստ է այնպիսի բնական ռեսուրսներով, ինչպիսիք են գազը, քարածուխը և այլ օգտակար հանածոներ, ինչպես նաև այնպիսի կարևոր տնտեսական ոլորտներով, ինչպիսիք են ձկնաբուծությունը, հանքարդյունաբերությունը, առևտուրը և այլն: Չնայած դրան, այն մշտապես եղել է Պակիստանի առավել աղքատ և զարգացածության առավել ցածր մակարդակ ունեցող նահանգներից: Հոդվածում ընդգծվում է Բելուջիստանի այդ հակասական դիրքը, ինչը խորացրել է բելուջների ընդհանուր օտարումն իրենց մայր երկրից՝ Պակիստանից: Պակիստանի կազմում կան մի քանի այլ նահանգներ ևս, որոնք թեև զգալի ներդրում են ունեցել երկրի զարգացման գործում, փոխարենը գրեթե ոչինչ չեն ստացել: Հոդվածում նախ ուսումնասիրվում են Բելուջիստանի ներսում առկա խնդիրները, այնուհետև դրանք դիտարկվում են տարածաշրջանային և գլոբալ համատեքստում:

Բանալի բառեր
բելուջներ, հասարակություն, տնտեսական շահագործում, քաղաքական օտարում, հարկադրանք

Նախաբան

Բելուջիստանն իր պատմության ողջ ընթացքում մարգինալացվել է: Գործընթացը սկսվել է 1947թ. Պակիստանի անկախացումից հետո: Բելուջիստանի հակամարտությունը տևական հակամարտություն է նահանգի բնակչության և Պակիստանի կառավարության միջև: Այն ծագել է սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային գործոնների համադրության արդյունքում և բնորոշվում է անվտանգության ցածր մակարդակով, շարունակական (կազմակերպված) բռնություններով, թույլ ինստիտուտներով ու կառավարման մակարդակով, ինչպես նաև հանրային ապրանքների և ծառայությունների հավասար բաշխման ու մատակարարման բացակայությամբ: Ներկայումս Բելուջիստանը սոցիալ-տնտեսական և քաղաքական ձախողումների անավարտ շղթա է: Նույնիսկ հարուստ բնական ռեսուրսների առկայության պայմաններում այն շարունակում է մնալ զարգացածության առավել ցածր մակարդակ ունեցող նահանգը: Խտրականության և հիասթափության խոր զգացումը ժողովրդին դարձրել է շատ կասկածամիտ Իսլամաբադի իշխանությունների նկատմամբ՝ լուրջ հարցեր առաջ քաշելով Պակիստանի դաշնության կարգավիճակի առնչությամբ: Հիմնական խնդիրն այն է, որ անկախության ձեռքբերումից ի վեր Պակիստանի բոլոր նահանգների բնակիչները որևէ դերակատարություն չունեն իրենց պատմության ընթացքը կամ երկրի քաղաքականության ուղղությունը որոշելու գործում: Նրանց շահագործում էին գաղափարախոսության և արտաքին վտանգների անվան ներքո, մինչդեռ իրական ներքին խնդիրները մնում էին չլուծված: Կառավարությունները հաշվետու չէին ժողովրդին կամ չէին ստանձնում պատասխանատվություն իրենց գործողությունների կամ քաղաքականության համար:

Հետազոտության խնդիրները

Հոդվածում ուսումնասիրվում են Պակիստանի նահանգ Բելուջիստանին առնչվող մի քանի կարևոր տեսանկյուններ: 1948թ. մարտին Պակիստանի կազմ մտնելուց ի վեր Բելուջիստանը շարունակում է համարվել պառակտված նահանգ՝ չնայած տարածքում հարուստ բնական ռեսուրսների և օգտակար հանածոների առկայությանը: Նույնիսկ այսօր այն որակվում է որպես Պակիստանի առավել անտեսված և զարգացածության առավել ցածր մակարդակ ունեցող նահանգ: Քսաներեք տարի Պակիստանի կազմում գտնվելուց հետո, միայն 1970թ. այն ստացավ նահանգի կարգավիճակ, սակայն դա չհանգեցրեց էական փոփոխությունների: Բելուջների մի մասը գործընթացի հենց սկզբից դեմ էր Պակիստանի կազմ մտնելու որոշմանը: Նախապատվություն տալով անկախացմանը՝ նրանք պարտիզանական պատերազմ էին վարում կենտրոնական իշխանությունների դեմ:

Բելուջիստանում ստեղծված ներկայիս իրավիճակը ոչ միայն վիճարկում է Պակիստանի ֆեդերալիզմն, այլև ներկայացնում է պոտենցիալ սպառնալիք երկրի միասնության և ամբողջականության համար: Այդ տեսանկյունից հոդվածում ուսումնասիրվում են

- այն համատեքստը, որում ձևավորվել է Բելուջիստան նահանգը,
- նահանգի սոցիալական կազմը՝ իր տարբեր տեսանկյուն-ներով,
- նահանգի բնական ռեսուրսների շահագործման խնդիրները,
- Բելուջիստանում ստեղծված ընդհանուր իրավիճակը՝ այդ թվում բռնության փուլերը,
- Բնակչության կարիքների բավարարման վրա հիմնված միջոցները, որոնք կարող են օգնել վերականգնել Պակիստանի հավասարակշռությունը և խաղաղությունը:

Մեթոդաբանությունը

Հոդվածում փորձ է արվում մեկնաբանել Բելուջիստանի խնդիրների ամբողջ համատեքստը՝ Պակիստանի պետության քաղաքակա-նության առնչությամբ: Նահանգի տարբեր խնդիրների վերաբերյալ առկա գրականությունը մեծ մասամբ նկարագրական է և տեսականորեն երկիմաստ: Հոդվածում օգտագործված են հիմնականում երկրորդային աղբյուրներ՝ գրքեր և հոդվածներ՝ ներկայիս վտանգավոր փուլը բացատրելու և վերլուծելու համար: Քանակական վերլուծության նպատակով օգտագործվել են առաջնային աղբյուրներ, մասնավորապես՝ զեկույցներ: Հետազո-տությունը գլխավորապես հիմնված է հավաքագրված տվյալների/նյութերի վրա, ինչը կօգնի ստուգել կանխավարկածի հավաստիությունը: Այդ նպատակով ձևակերպված խնդիրները և հարցադրումները կուսումնասիրվեն տարբեր ասպեկտների վերաբերյալ ձևավորված տեսական շրջանակներում:

Գրականության ակնարկ

Բելուջիստան նահանգի ժողովրդի պատմությունը ներառում է գաղութային հպատակություն, բռնազավթում, էթնիկ պահանջների մերժում, ներպետական գործերին միջամտություն և իրական զարգացման խոչընդոտում Իսլամաբադի կողմից: Մյուս կողմից, ցեղային և խմբային հակամարտությունը թույլ չի տվել, որ բելուջները հետամուտ լինեն իրենց պահանջների բավարարմանը: Բելուջների քաղաքական պատմության և ազգայնականության համատեքստում առավել նշանակալի հետազոտողներ են Ինայաթուլլա Բելուջը և Սելիգ Հարիսոնը: Նրանք իրենց մանրակրկիտ ուսումնասիրությունների և արժանահավատ գիտական գործունեության ճանապարհով պահպանել են ազգայանական խնդիրների լուծման մեթոդաբանությունը: Բելուջը

«Մեծ Բելուջիստանի խնդիրը[1]» մենագրության մեջ անդրադարձել է բելուջների պատմությունն ու պատմագրությունը ներկայացնելու մոդելներին և արևմտյան մեթոդաբանությանը: Նրա աշխատանքը կարևոր նշանակություն է ունեցել Բելուջիստանի ազգայնական համոզմունքների ամրապնդման գործում: Ուսումնասիրվող առարկայի տեսանկյունից հատկանշական է նաև Ս. Հարիսոնը, ով 1970-ական թվականներին բելուջների ազգայնական շարժման առաջնորդների հետ ուներ սերտ կապեր և տիրապետում էր եզակի ու արժեքավոր փաստաթղթերի, որոնք առնչվում էին պատմությանը և քաղաքականությանը: Իր հայտնի «Աֆղանստանի ստվերը[2]» աշխատության մեջ նա ուսումնասիրում է 1970-ական թվականների բելուջների ազգայնական շարժումը, որը հանգեցրել է 1973-1977թթ. զինված հակամարտությանը:

Կան մի քանի այլ հեղինակներ, որոնք նույնպես կարևոր ներդրում են ունեցել բելուջների մշակույթի, լեզվի, հասարակության և տնտեսական պայմանների ուսումնասիրության գործում: Բելուջների մշակույթի ձևավորման և զարգացման ամբողջ պատմության ընթացքում ազգայնական տրամադրությունները մշտապես եղել են առանցքային գործոն: Բելուջներն ունեն հարուստ ժողովրդական մշակույթ՝ ազգային առակներ, ասացվածքներ, երգեր ու պատմություններ: Գրականությունը ազգայնական զգացմունքների ու հույզերի ոգեշնչման կարևոր աղբյուր է: Սաբիր Բաղալխանն իր գիտական հոդվածներում[3] ընդգծում էր, որ բելուջ ցեղերը տարատեսակ լեգենդների, առածների, բանաստեղծություն-ների ու երգերի միջոցով զարգացրել են ավելի հարուստ մշակութային ժառանգություն: Մասնավորապես երգերը բելուջների համար ծառայել են որպես մշակութային կապող օղակ և

[1] **Baloch I.,** The Problem of Greater Baluchistan: A Study of Baluch Nationalism, Stuttgart, Steiner Verlag Wiesbaden, 1987, p. 75.
[2] **Harrison S.,** In Afghanistan's Shadow:Baloch Nationalism and Soviet Temptation, New York and Washington, Carnegie Endowment, 1981.
[3] **Maeda K.,** The Studies of the Ethno-Religious Images in Jhalawan and Las Bela Provinces in Baluchistan, University of Wako, 1999, pp. 83-85.

արտահայտչամիջոց: Համաշխարհային երաժշտությունը[4], Արևելյան գրականության բառարանը (1974)[5], բելուջերեն առաջին պարբերականը՝ Ումանը *(1951),* հաստատում են այն տեսակետը, որ բելուջների էպիկական երգերն արտացոլում են նրանց պատմությունը, արժեքները, սովորույթներն ու ավանդույթները: 1948 թվականից սկսած, երբ Բելուջիստանը դարձավ Պակիստանի մաս, ավելի բարենպաստ միջավայրը հանգեցրեց այնպիսի մշակութային ինստիտուտների զարգացմանը, ինչպիսիք են Բելուջների գրականագիտական հասարակությունը և Բելուջերեն լեզվի ասոցացիան:

Հետազոտողների շրջանում ձևավորել է երկու տեսակետ բելուջական հասարակության և սոցիալական կազմակերպման վերաբերյալ: Մի մասն ընդունում է այն փաստը, որ զարգացման և արդիականացման քաղաքականության վրա խորապես ազդում են այն օրինաչափություններն ու գործընթացները, որոնք բնորոշում են խմբային և դասային փոխհարաբերությունները[6]: Մյուս մասը գտնում է, որ չնայած արդիականացմանն ու զարգացմանը, ցեղերի և ցեղային կազմակերպման կարևորությունը չի սպառվել[7]: Սակայն ժամանակի ընթացքում բելուջ հասարակությունը և դրա կազմակերպման ձևը զգալիորեն փոխվել են, և ներկայումս ձևավորվել է համատարած ազգային գիտակցություն, որը հատում է ցեղային բաժանումները[8]: Ինչպես նշվում է Մահմուդ Ալիի աշխատանքում[9], ավանդական առաջնորդների բացակայության պայմաններում սոցիալ-տնտեսական փոփոխությունների դինամիկան առաջ է բերում նոր տեսակի առաջնորդի՝ հասարակ,

---

[4] *Worlds Music*. South Asia: The Indian Subcontinent, New York and London, 2000, vol. 5, p. 773.
[5] Dictionary of Oriental Literature, London, 1974. vol. 2, pp. 56-58.
[6] **Bill J., Springborg R.,** Politics in the Middle East. (3rd edition). Glenview, Little Brown and Company, 1990, p. 86.
[7] **Khoury Ph., Kostiner J.** Tribes and State in the Middle East. Berkeley, University of California Press, 1990, p. 136.
[8] **Harrison S.,** նշվ. աշխ.:.
[9] **Mahmud A.**, The Fearful State: Power, People and Internal War in South Asia, London, 1993, p. 153.

ազնվական ծագման երիտասարդների: Այլ կերպ ասած, չնայած բելուջները մշակել են ազգայնական գաղափարախոսություն, ցեղային աջակցությունը շարունակում է մնալ Բելուջիստանի հնարավոր հաջողության վճռորոշ գործոն:

Նույնիսկ գաղութային դարաշրջանում բրիտանացիները, չնայած անտեսման քաղաքականությանը, որոշ փոփոխություններ էին ներմուծել նահանգում, խրախուսել առևտուրը, կառավարումը և ստեղծել բազմաթիվ նոր մասնագիտություններ: 1948թ. անեքսիայից հետո Բելուջիստանն ամբողջությամբ մեկուսացվել էր: 1950-ական թվականների սկզբին փուշթուններն իրենց ձեռքը վերցրեցին առևտրային կյանքը, որը նախկինում վերահսկում էին սինդերը: Քաղաքական առումով ևս Պակիստանի այս նահանգը տևական ժամանակահատված մնում էր ստվերում: Ինչպես նշվում էր Բելուջիստանի կառավարության փաստաթղթերում, քաղաքում և գյուղերում բնակվող բելուջների միջև զգալի տարբերությունները դարձել էին լուրջ մտահոգության պատճառ[10]: Բացի հարուստ օգտակար հանածոներից և բնական ռեսուրսներից, նահանգում առկա է մեծ քանակով արտարժույթ[11]: Ինչպես նշում է New York Times[12]-ը և Dawn[13]-ը, ի թիվս այլ դժգոհությունների, բելուջները նաև պնդում են, որ որևէ շահույթ չունեն իրենց օգտակար հանածոներից: Բելուջների տնտեսական դժգոհությունների մասին նշվում է Միր Խուդա Բախշ Մառի Բելուջի «Դատավորը կարող է խոսել[14]» աշխատանքում, Պակիստանում բելուջների ազգային պայքարի վերաբերյալ Ջանմահմադի էսսեում[15] և Մոզաֆֆար Շահինի «Պակիստանում կաբինետի ձևավորման քաղաքականությունը.

[10] Government of Baluchistan, Development Statistics of Baluchistan, 1981, vol. 1, no. 10, Quetta.
[11] **Brailvi M.,** Baluchistan-What is the Issue?, Quetta, 1984.
[12] *The New York Times*, New York, February 15, 1980.
[13] *Dawn*, February 1, 1946, p. 4.
[14] **Bakhsh Marri Kh**., A Judge May Speak. Lahore, Ferozsons, 1990, p. 166.
[15] **Janmahmad,** Essays on Baloch National Struggle in Pakistan. Emergence, Dimonsion, Repercurssions. Quetta, Gosha-e-Adab, 1989, p. 273.

կենտրոնական կաբինետի կազմավորման ուսումնասիրություն[16]›› մենագրության մեջ: Բելուջիստան նահանգի շարունակական անտեսումը կյանքի բոլոր ոլորտներում խորացնում է Իսլամաբադից մեկուսացման զգացումը:

Գրականության ակնարկ իրականացնելու համար ուսումնասիրությունը մեծ մասամբ հիմնվել է երկրորդային աղբյուրների վրա, որոնց միջոցով մեկնաբանվել են Պակիստանի Բելուջիստան նահանգի գործունեության տարբեր ասպեկտներ՝ հասարակություն, մշակույթ, լեզու, տնտեսություն, քաղաքականություն և այլն: Դրանց օգնությամբ հավաքագրվել է կոնկրետ տեղեկատվություն և ձևավորվել Բելուջիստանում առկա խնդիրների վերաբերյալ ընդհանուր պատկերացում:

Բելուջիստանի տարրերը

Նահանգի ձևավորման ընթացքը: Բելուջիստանն ի սկզբանե կազմված է եղել երեք մասից: Առաջինը Բելուջիստանի Գլխավոր հանձնակատարի նահանգն է, որն ուղղակիորեն կառավարում էր բրիտանական Հնդկաստանը և որը 1947թ. օգոստոսին դարձավ Պակիստանի մաս, երկրորդը՝ ֆեոդալական բնույթի չորս՝ Մակրանի, Խարանի, Լաս Բելայի և Կալաթի սուլթանությունները, որոնք 1948թ. մարտին որոշեցին միավորվել Պակիստանի հետ: Կալաթի սուլթանությունը համաձայնեց միանալ Պակիստանին միայն այն պայմանով, որ միայն անվտանգությունը, արժույթը, արտաքին հարաբերությունները և ֆինանսները կլինեն դաշնային կառավարության վերահսկողության ներքո: Երրորդ մասը Գվադերի անկլավն էր, որը 1958թ. ազատագրվեց Օմանի սուլթանությունից: 1952թ. հոկտեմբերին չորս սուլթանությունները միավորվեցին՝ ձևավորելով Բելուջիստանի նահանգների միությունը: Երեք տարի անց՝ 1955թ. հոկտեմբերին, Բելուջիստան նահանգների միության և Բելուջիստանի Գլխավոր

[16] **Mozaffar Sh.**, The Politics of Cabinet Formation in Pakistan: A Study of Recruitment to Central Cabinets, Ohio, Miami University, 1980, p. 180.

հանձնակատարի նահանգի միավորման արդյունքում ներմուծվեց «Մեկ միավորում» համակարգը: Գվադերի անկլավը, որը դեռևս Օմանի սուլթանության մաս էր, վաճառվեց 1958թ. հոկտեմբերին, և բոլոր տարածքները միասին կազմեցին Արևմտյան Պակիստանի նահանգը: Նահանգը պաշտոնապես կազմալուծվեց 1970թ., և նախկին Բելուջիստանի նահանգների միությունը և նախկին Բելուջիստանի Գլխավոր հանձնակատարի նահանգը միավորվեցին՝ ստեղծելով Բելուջիստան նոր նահանգը: 1977թ. նահանգն ընդարձակվեց՝ ներառելով նաև Գվադերը: Այդպիսով, ներկայումս Բելուջիստանը ներառում է Գլխավոր հանձնակատարի նահանգը, Բելուջիստանի նահանգների միությունն ու Գվադերի անկլավը: Ընդհանուր առմամբ, Պակիստանը կազմված է չորս նահանգներից՝ Բելուջիստան, Գիլգիթ Բալթիստան, Խայբեր-Փաղտունխվա, Փենջաբ և Սինդ:

Բելուջիստանը գտնվում է Պակիստանի հարավ-արևմուտքում: Նահանգի կենտրոնական և ամենախոշոր քաղաքը Քվետտան է: Այն հյուսիս-արևմուտքում սահմանակցում է Փենջաբին և դաշնության վերահսկողության տակ գտնվող ցեղային տարածքներին, հարավ-արևելքում՝ Սինդին, հարավում՝ Արաբական ծովին, արևմուտքում՝ Իրանին, հյուսիսում՝ Աֆղանստանին: Նահանգի բնակչության մեծամասնությունը բելուջներ, փուշթուններ կամ բրահուիներ են: Կան նաև հազարասների, սինդերի և փենջաբցիների փոքր համայնքներ, ինչպես նաև ուզբեկներ ու թուրքմեններ: Նահանգն իր տարածքով ամենամեծն է և զբաղեցնում է Պակիստանի ամբողջ տարածքի 44 տոկոսը՝ 347,190 քառակուսի կիլոմետր: Այն նաև սահմանակից է Մերձավոր Արևելքի, Հարավարևմտյան Ասիայի, Կենտրոնական Ասիայի և Հարավային Ասիայի աշխարհաքաղաքական տարածաշրջաններին: Բարձրադիր վայրերի կլիման բնորոշվում է ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Հյուսիսային շրջանների ցածրադիր վայրերին ևս բնորոշ են ցուրտ ձմեռները, իսկ Մակրանի ափամերձ շրջաններում եղանակն ավելի մեղմ է: Ձմեռներն ավելի մեղմ են հարթավայրային շրջաններում: Ամառները շոգ և չոր են՝

հատկապես Չագայի և Խարանի չորային գոտիներում: Անապատային կլիման բնորոշվում է շոգ ու շատ չորային պայմաններով:

Սոցիալական կազմը: Պակիստանի նահանգ Բելուջիստանի սոցիալական կազմն աստիճանաբար, սակայն շատ դանդաղ փոխվում է և հայտնվում ամբողջ աշխարհի ուշադրության կենտրոնում: Ի սկզբանե այն կազմված էր մի քանի կլանային խմբերից, որոնք պնդում էին, որ ունեն արյունակցական կապեր և ընդհանուր նախնիներ: Ազգակցական կապը, որն ունի իր հատուկ ձևը կլանի և ընտանիքի կառուցվածքում, հասարակության կարգավորման հիմնական մեխանիզմն է: Նույնիսկ 19-րդ դարում, երբ արդիականացումը և ուրբանիզացիան նվազեցրել են ցեղերի և ցեղային խմբերի նշանակությունը, ցեղային տարրերն ամբողջությամբ չեն վերացել[17]: Ցեղային մոդելները գոյություն ունեն, իսկ վերահսկողության պատերնալիստական մոդելները ընտանեկան ցանցերի միջոցով պահպանում են իրենց արդիականությունը: Միջազգային տնտեսական զարգացման գծով փորձագետ դոկտոր Նեկ Բուզդարը հաստատում է, որ բելուջ հասարակությունը մեծապես հավատարիմ է կենսակերպի ավանդական ձևերին: Նա կարծում է, ոչ չնայած Բելուջիստանում կուսակցությունների ձևավորմանը, ցեղային կազմակերպումը և քաղաքական ղեկավարությունը գերիշխող դերակատարություն ունեն տեղական և մարզային կառավարման գործում[18]: Բելուջիստանում ցեղերը բաժանված են Շահրիների և քոչվոր ցեղերի: Առաջինները ֆեոդալական կարգերի հիմքն են, որոնք գերիշխող են կենտրոնական և հարավային Բելուջիստանում (Մակկորան), մինչդեռ քոչվորները հյուսիսում տարածված ցեղային կարգի անկյունաքարն են: Երկու խմբերը պատմականորեն կապված են միմյանց հետ՝ տնտեսական, քաղաքական, ռազմական

[17] **Khoury Ph., Kostiner J.**, նշվ. աշխ.:
[18] **Buzdar N.,** Social organization, resource use, and economic development in Baluchistan, *Balochi Labzank,* Baluchistan (monthly), 2000, March-April, p. 82.

և լեզվական կապերով[19]: Բելուջների ցեղային համակարգը հատվածական է, ինչը նշանակում է, որ այն իրենից ներկայացնում է հավասար գծերի համախումբ՝ կապված հարաբերական և պայմանական կապերով քաղաքականության իրականացման համար: Որոշումներն ընդունում են վեհաժողովներն ու խորհուրդները՝ առանց պաշտոնների ու իշխանության հիերարխիայի[20]: Ուստի, այդ համակարգում չկա կենտրոնացված իշխանություն: Հաշվի առնելով այդ փաստը՝ գաղութարար պետությունը իրականացնում էր վերահսկողություն բելուջների ցեղերի նկատմամբ, իսկ բրիտանացիները հավատարմության փոխարեն նրանց ցեղային կենսակերպը թողնում էին մեծ մասամբ անփոփոխ:

Բելուջների սոցիալական ինստիտուտները: Ավանդական բելուջ հասարակության մեջ առավել հայտնի ինստիտուտներ են Սարդարին և Ջիրգան: Այդ համակարգերի շրջանակում յուրաքանչյուր ցեղ ունի իր առանձին ջիրգան (ավագների խորհուրդ), որը ծառայում էր որպես դատարան[21]: Ցեղային մակարդակում Ջիրգան գործում էր Սարդարի վերահսկողության ներքո և զբաղվում էր ցեղերի, նրանց միջև ծագած վեճերի, նոր խանի ընտրության և հնարավոր արտաքին սպառնալիքների հարցերով: Բելուջ հասարակության համար ապահովելով պատմական, սոցիալական և քաղաքական կառուցվածք՝ Ջիրգան տևական ժամանակահատված անձեռնմխելի էր և օգնում էր բելուջներին անարխիայի, քաոսի և ծայրահեղ իրավիճակների դեմ պայքարում: Ավանդական Ջիրգայի սահմանադրությունը և

---

[19] **Swidler N.,** Brahui Political Organization and the National State, *in Ainslie Embree, ed. Pakistan's Western Borderlands, Durham, Carolina Academic Press*, 1977.

[20] **Salzman Ph.,** Why tribes have chiefs:A case from Baluchistan, in Richard Tapper (ed.), The Conflict of Tribe and State in Iran, and Afghanistan, London, 1983, p. 267.

[21] **Mohammad Usman H.**, Baluchistan: Mazi, Hal aur Mustaqbel, Karachi Indus Publications, 1976, pp. 174-175.

լիազորությունները փոխվեցին 19-րդ դարում բրիտանական կառավարման ներքո, երբ սըր Ռոբերտ Սանդմենը ներկայացրեց Ջիրգայի նոր տեսակ՝ «Շահի Ջիրգա», որտեղ կարող էին տեղեր զբաղեցնել միայն սարդարները և արիստոկրատները: «Շահի Ջիրգայի» ժողովները սովորաբար անցկացվում էին տարին մեկ կամ երկու անգամ: Դրա լիազորությունները բավական լայն էին: Այն կարող էր հարկեր սահմանել սեփականության և աշխատանքի վրա, և միայն Քաղաքական գործակալը կարող էր վերանայել որոշումները[22]: Նոր համակարգը համարվում էր որպես անուղղակի կառավարման մեխանիզմ, որում իշխանությունները վերապահված էին բրիտանացիներին հավատարիմ մի քանի ցեղային առաջնորդների, որոնք պատրաստ էին գործել սեփական ժողովրդի դեմ:

Բելուջների մյուս ավանդական սոցիալական համակարգը՝ Սարդարին, ծագել է Հնդկաստանի պատմության Մուղալի ժամանակաշրջանում: Ի հակադրություն Ջիրգայի համակարգի՝ Սարդարի համակարգը խիստ կենտրոնացած է և հիերարխիկ[23]: Համակարգի վերևում սարդարն է՝ կենտրոնական առաջնորդը, նրանից ներքև՝ վադերաները, ստորաբաժանումների ղեկավարները, այնուհետև ավելի փոքր ցեղային միավորների կլանային կամ ենթակլանային առաջնորդները: Այդ կառույցում սարդարների բացառիկ իշխանությունը բխում է վաղ շրջանի ցեղային հասարակության ռազմական բնույթից: Սակայն ցեղային համակարգը զգալիորեն փոխվել է արդիականացման արդյունքում: Դրան նպաստեց միջազգային սահմանների հաստատումը, ինչի արդյունքում տարածքը մասնատվեց երեք մասի՝ որոշ խոշոր ցեղեր բաժանվեցին պետությունների միջև և արգելվեց քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերի ամառային և ձմեռային միգրացիաները:

---

[22] **Dehwar M.M.S.,** Contemporary History of Baluchistan. Quetta, Third World Publication, 1994, p. 260.

[23] **Barth F.,** Pathan identity and its maintenance", in Fredrik Barth (ed.), *Ethnic Group and Boundaries*. Boston, 1969, pp. 117-134.

Երկրորդ մարտահրավերն առաջացավ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում, երբ բրիտանացիները և պարսիկները որոշ չափով խաղաղություն հաստատեցին Բելուջիստանում: Ավանդական քոչվորական տնտեսական համակարգի կործանման արդյունքում ցեղերը տեղափոխվեցին քաղաքներ և գյուղեր: Դա, իր հերթին, մեծացրեց առաջնորդների հեռավորությունը ցեղերից: Ժամանակի ընթացքում բելուջների ավանդական սոցիալական կազմակերպումը զգալիորեն փոխվեց, և ներկայումս բելուջների շրջանում ձևավորվել է համատարած ազգային գիտակցություն, որը կրճատում է ցեղային բաժանումները[24]: Ցեղային հասարակության մեջ քաղաքական գաղափարախոսությունը, ինչպիսին է օրինակ բելուջական ազգայնականությունը, հազիվ թե վայելի աջակցություն, քանզի ցեղի անդամների հավատարմությունը չի տարածվում միավորների վրա, այլ առանձին ցեղերի վրա: Ցեղերի ներսում անհատի ինքնությունը հիմնված է դրա պատկանելությամբ ավելի մեծ խմբին: Վերջինս ոչ թե ազգն է, այլ՝ ցեղը:

Պակիստանի բելուջները

Հետգաղութային շրջանում, երբ Բելուջիստանը կազմում էր նոր ձևավորված Պակիստանի պետության բաղկացուցիչ մասը, այն նաև դարձավ տարածք, որտեղ բնակություն հաստատեց բելուջների 70 տոկոսը: Պատմականորեն Բելուջիստանը՝ իր ցեղային և կիսացեղային սոցիալական կառուցվածքով, ունեցել է ուժեղ քաղաքական և տնտեսական առանձնահատուկ իշխանություն, որը պատկանում էր ցեղի առաջնորդներին և սարդարներին: Նահանգի քաղաքականության վրա ցեղի առաջնորդների ազդեցությունը խոչընդոտում էր քաղաքական գործընթացի ընդհանուր զարգացմանը, ինչը կարող էր ճանապարհ հարթել ավելի լայն քաղաքական մասնակցության համար: Մյուս կողմից, Պակիստանն

[24] **Harrison S.,** նշվ. աշխ.:

ի սկզբանե չի եղել իրական ժողովրդավարություն, և հետևապես ընտրական քաղաքականությունը չի կարողացել գերազանցել երկրի քաղաքական տնտեսությանը: Վերահսկվող ժողովրդավարության փուլում, որտեղ ընդհատվում էր ուղղակի ռազմական կառավարումը կամ բռնապետական ռեժիմը, կառավարման բնույթը և ձևը շարունակում էին մնալ անփոփոխ: Իրական քաղաքական և տնտեսական իշխանությունները մշտապես վերապահվել են կենտրոնական ուժերին և երբեք չեն փոխանցվել նահանգների ներկայացուցիչներին: Դա հանգեցրել է ոչ արդյունավետ քաղաքական գործընթացի, հատկապես՝ նահանգային մակարդակում, ինչն էլ ավելի է ամրապնդել վերնախավի դիրքերը: Ի տարբերություն Պակիստանի այլ նահանգների, որտեղ միջին խավը ձևավորվում էր հստակ քաղաքական և տնտեսական հավակնություններով, Բելուջիստանի սոցիալական կառուցվածքը կտրուկ բաժանված է ցեղային առաջնորդների փոքր, բայց բավական հզոր դասի, մենաշնորհ դիրք ունեցող գործարարների, ավելի ցածր դասի և պետական հատվածի աշխատակիցների փոքրաթիվ խմբերի միջև: Ուստի, բելուջների հասարակության մեջ միջին խավ գոյություն չունի:

Բելուջների մեծամասնությունը հանաֆիական սուննիներ են, սակայն կան նաև 500000-700000 Զիկրի (զրադաշտական) բելուջներ, ովքեր բնակվում են ափամերձ Մակրանում և Կարաչիում: Զիկրիները հավատում են Մեսիա Նուր Փակին, ում ուսմունքները նրանք նախընտրում Մուհամեդ մարգարեի ուսմունքից: Բելուջ հասարակությունը ստրատիֆիկացված է և բնորոշվում է որպես «ֆեոդալական միլիտարիզմ»: Առաջնորդի, հակիմի և նրա շքախմբի (անասնապահներ, հողագործներ, ցածր խավի առաջնորդներ, ցածր խավի վարձակալող ֆերմերներ և նախկին ստրուկների ժառանգներ) միջև կա կարևոր սոցիալական կապ: Բելուջները պատմականորեն սովոր են անուղղակի կառավարմանը, որի շրջանակներում տեղական վերնախավին վերապահված է ինքնավարության զգալի մակարդակ: 1970-ական թվականների իրադարձությունների արդյունքում Բելուջիստանի և

կենտրոնական կառավարության միջև հարաբերությունները զգալիորեն վատացան: Կոնֆլիկտը խլեց բազմաթիվ բելուջների կյանք և «քաղաքականացրեց» նրանց, ովքեր վաղուց հարմարվել էին ստատուս քվոյին: Ավելի լայն նահանգային ինքնավարության սկզբնական պահանջները վերածվեցին լայնամասշտաբ շարժման՝ ուղղված իշխանության վերաբաշխմանը: Հաջորդող տասնամյակների ընթացքում հակիմների, ցածր դասի առաջնորդների և հիզմատկարների միջև ավանդական հակասությունները մեղմացան, քանի որ բելուջները սկսեցին իրենց ընկալել որպես միասնական խումբ, որը գործում է Պակիստանի կամ Փենջաբի գերիշխանության դեմ:

Տնտեսություն

Տնտեսությունը սերտորեն կապված է սոցիալական համակարգի հետ: Այն մեծապես հիմնված է բնական գազի, քարածխի և հանածոների արտադրության վրա: Գյուղատնտեսությունը և անասնաբուծությունը նույնպես գերակայում են բելուջների տնտեսության մեջ: Այգեգործությունը համեմատաբար նոր, սակայն զարգացող ոլորտ է: Այլ կարևոր տնտեսական ոլորտներ են ձկնաբուծությունը, հանքարդյունաբերությունը, արդյունաբերությունը, առևտուրը և այլ ծառայություններ, որոնք մատուցում են նահանգի պետական և մասնավոր հատվածի կազմակերպությունները: Զբոսաշրջությունը սահմանափակ է, սակայն որոշ զարգացում է ապրել նահանգի արտասովոր գրավչության արդյունքում: Արևելքում սահմանափակ հողագործությունը և Արաբական ծովի ափերին ձկնորսությունն ապահովում են եկամուտ և սնունդ տեղի բնակչության համար: Շատ բելուջների և բրահուիների ցեղային կենսակերպի պատճառով կարևորվում են անասնապահությունը և առևտրային շուկաները: Մարդիկ նախընտրում են ապրել այն շրջաններում, որտեղ կան ջուր, ճանապարհներ, հիվանդանոցներ, էլեկտրականություն և բարենպաստ եղանակ: Ուստի, բնակչությունը կենտրոնացած է

Քետտայի և Կալաթի բարձրադիր վայրերում և Փենջաբի հարթավայրերին և բարձրադիր Սինդին սահմանակից շրջաններում: Խիտ բնակեցված են նաև Մակրանի մերձափնյա և Սինդի արևմտյան սահմանի ուղղությամբ Կիրթարի լեռնաշղթային հարակից տարածքները: Նահանգում առատ անձրևների բացակայությունը և ջրի առկայությունը միայն որոշ գոտիներում պայմանավորում են ժողովրդի զբաղվածությունը:

Այսօր բելուջները, չնայած զբաղեցնում են ընդարձակ և ռեսուրսներով հարուստ տարածք, չեն կարողացել պահպանել սոցիալ-տնտեսական զարգացման և արդիականացման տեմպը՝ ի տարբերություն տարածաշրջանի մյուս ազգերի: Բելուջներն ունեին տնտեսական դժգոհություններ դեռևս բրիտանական կառավարման շրջանում: Բրիտանացիները զարգացնում էին Սինդի, Փենջաբի և Հյուսիսարևմտյան սահմանամերձ նահանգի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը՝ անտեսելով Բելուջիստանն ու նահանգի տնտեսական զարգացումը[25]: Բնակչության մի մասը գտնում էր, որ դա ոչ թե պարզապես արհամարհանք է, այլ նպատակաուղղված շեղում, նույնիսկ՝ ճնշում: Բրիտանացիներն, անկասկած, պետք է պաշտպանեին իրենց սեփական իմպերիալիստական շահերը: Պակիստանի մարքսիստ Այջազ Ահմադը նշում էր, որ Բելուջիստանում բրիտանական իմպերիալիստական շահերը նախևառաջ ոչ թե տնտեսական, այլ ռազմական և աշխարհա-քաղաքական բնույթի էին[26]: Ռազմական գծով փորձագետները արտահայտում էին նույն տեսակետը և ընդգծում էին, որ Բելուջիստանը շախմատի տախտակ է, որի վրա խաղում են Մեծ խաղ[27]: Բրիտանացիները հավանաբար մտածում էին, որ տնտեսապես և քաղաքականապես թույլ Բելուջիստանն ավելի հեշտ կլինի կառավարել: Մյուս կողմից, զարգացած և միասնական Բելուջիստանը կօգներ բարելավել հարաբերությունները ոչ այնքան

[25] *Dawn,* February 1, 1946.
[26] **Ahmad A.,** The National Question in Baluchistan, Pakistan Forum, **3,** 8-9, 1973, 4-18.
[27] **Ahmad S. I.,** Baluchistan: Its Strategic Importance, Karachi, Royal Book Company, 1992, pp. 70-85.

հուսալի հարևանների հետ[28]: Այդուհանդերձ, չնայած այդ անտեսմանը, ժամանակի ընթացքում բրիտանացիները տարածքում խրախուսել են առևտուրը և ստեղծել բազմաթիվ նոր մասնագիտություններ: Այդ բոլոր զարգացումները 1920-ական թվականներին հանգեցրել են բելուջների ազգային գիտակցության և ազգայնականության մակարդակի բարձրացմանը Արևելյան Բելուջիստանում:

1948թ. անեքսիայից հետո, ինչպես նախկինում էր, Բելուջիստանը շարունակում էր մնալ զգալիորեն մեկուսացված: 1950-ական թվականների սկզբին փուշթունները վերահսկում էին առևտրային կյանքը, ինչը նախկինում Սինդի հինդուների գործառույթն էր: Նահանգային կառավարումը գլխավորապես իրականացնում էին փենջաբցիները, և ընդամենը մի քանի բարձրաստիճան քաղաքացիական ծառայողներ էին ազգությամբ բելուջ: Հետազոտությունների համաձայն, Բելուջիստանում կային ստորերկրյա և հանքային ջրերի խոշոր պաշարներ, սակայն նահանգի զարգացածության ցածր մակարդակը դժվարացնում էր դրանց շահագործումը: Արդյունքում, 1970-ական թվականներին, ի տարբերություն մյուս երեք նահանգների (Փենջաբ, Սինդ և Հյուսիսարևմտյան սահմանամերձ նահանգ), Բելուջիստանը Պակիստանի առավել անտեսված և աղքատ նահանգն էր: 1976թ. մեկ շնչի հաշվով տարեկան եկամուտը կազմում էր 54 դոլար, մինչդեռ Փենջաբում այն կազմում էր 80 դոլար, Սինդում՝ 78 դոլար, Հյուսիսարևմտյան սահմանամերձ նահանգում՝ 60 դոլար[29]:

1977թ. նահանգում կյանքի միջին տևողությունը 42 տարի էր՝ ի տարբերություն ազգային ցուցանիշի, որը կազմում էր 60 տարի: Ազգային գրագիտության մակարդակը 16 տոկոս էր, մինչդեռ Բելուջիստանում այն կազմում էր 6-9 տոկոս[30]: Բելուջիստանի տնտեսական բացը զավեշտալի էր նահանգի ծովային և հանքային

---

[28] **Mansergh N.,** *The* Transfer of Power 1942-47, vol. 12, London, Her Majesty's Stationary Office, August 2, 1982, p. 480.
[29] **Burki Sh.,** Pakistan Under Bhutto, London, Macmillan Press, 1980, p. 94.
[30] **Harrison S.,** նշվ. աշխ.:

ռեսուրսների հարուստ պաշարների լույսի ներքո: Ըստ բելուջ ազգայնականների, նահանգի ժողովուրդը չէր շահում տարածքի հսկայական ռեսուրսներից, իսկ եկամուտը տրամադրվում էր դաշնության գանձապետարանին: Շարունակական անտեսումը խորացնում էր մեկուսացման զգացումը և Իսլամաբադի նկատմամբ ատելությունը: Բելուջ ազգայանականների մի մասը գտնում է, որ Պակիստանի դաշնության կենտրոնական բնույթն այնպիսին է, որ փոքր ազգերի համար, ինչպիսիք են բելուջները, դժվար է հարմարվել դաշնության կազմում:

Բելուջների տնտեսական պահանջները հիմնականում վերաբերում էին բնական ռեսուրսների արդարացի բաշխմանը կենտրոնի և նահանգների միջև: Բելուջիստանը Պակիստանի դաշնության առավել հարուստ միավորն է, քանզի տարածքում կան այնպիսի հանքային ռեսուրսներ, ինչպիսիք են բնական գազը, պղինձը, մարմարը և ոսկին: Միաժամանակ, այն ունի կարևոր աշխարհագրական և ափամերձ դիրք[31]: Սակայն նավահանգիստ-ներն ու ջրային փոխադրումները ամբողջությամբ վերահսկում ու գործարկում էր Իսլամաբադը: Տեղի բնակչությունը մշտապես դժգոհում էր, որ իրենք չունեն բնական ռեսուրսներին տիրապետելու իշխանություն և զարգացման գործում որևէ մասնակցություն:

Բելուջների կրոնը և մշակույթը

Պակիստանի պետական կրոնն իսլամն է, որին հարում է բնակչության 95-98 տոկոսը[32]: Մնացած 2.5 տոկոսը հարում է քրիստոնեությանը, հինդուիզմին և այլ կրոնների: Մահմեդա-կանները բաժանված են տարբեր ուղղությունների: Նրանց

[31] **Imran M., Akram-ul-Haq M.,** Pakistan federation and Baloch nationalism: A prospect for economic development and political challenges, *Canadian Social Science*, 2016, 12, 3, 56-61, http://www.cscanada.net/index.php/css/article/view/8252.

[32] Country Profile: Pakistan, Library of Congress Country Studies on Pakistan, February, 2005.

մեծամասնությունը սուննիներ են, 5.20 տոկոսը շիաներ են, իսկ 2.2 տոկոսը ահմադիներ: Ընդհանուր առմամբ, բելուջները տարբերվում են իրենց հարևաններից ոչ միայն լեզվով, գրականությամբ, կրոնով և համոզմունքներով, այլև իրենց ավանդույթներով և սովորույթներով: Օրինակ, արաբական իսլամին չհաջողեց ձուլել պարսիկներին արաբական ավանդույթներին: Իրանցիները պայքարում և ընդդիմանում էին արաբների տիրապետությանը, և չնայած նրանք ընդունեցին իսլամ, սակայն ձևավորեցին իսլամի նոր ուղղություն՝ շիական: Նրանք ունեին իրենց առանձին լեզուն, գրականությունը և ավանդույթները: Թուրքերը և աֆղանները նույնպես մերձում էին իրանական իսլամի տիրապետությունն ու ազդեցությունը: Նույնը վերաբերում էր նաև բելուջներին, ովքեր ունեին իրենց ավանդույթներն ու սովորույթները, որոնք տարբերվում էին Փենջաբի, Սինդի, իրանական և աֆղանական մահմեդականների ավանդույթներից: Կրոնի դեպքում ևս բելուջների ընկալումները տարբերվում էին Մերձավոր արևելքի այլ ազգերի ընկալումներից: Նրանք արմատական չեն և չեն հավատում կրոնի և քաղաքականության համադրմանը[33]: Բելուջների ճնշող մեծամասնությունը հանաֆիական սուննիներ են: Կարևոր է նշել, որ նախքան իսլամի հարկադրված ընդունումը բելուջները մեծ մասամբ հարում էին զրադաշտականությանը: Վերջինիս բնորոշ ավանդույթները առ այսօր գործում են որոշ բելուջական ցեղերի շրջանում[34]: Բելուջների հավատքի փոփոխությունը դրական ազդեցություն ունեցավ պետականության ընկալման վրա: Հատկապես Նասիր խանի շրջանում «Բելուջիստանը» սկսեց նշանակել ավելի, քան աշխարհագրություն: Այսօր այն վերաբերում է նաև բելուջական մշակույթին, հետևաբար նաև սոցիալական և քաղաքական միավոր է:

Լեզուն, մշակույթը և ընկալումները սերտորեն փոխկապակցված են: Լեզուն եղել է առանցքային տարր ազգային ինքնության

---

[33] **Baloch I.,** նշվ. աշխ.:

[34] **Qaisarani Sh.,** Baluchistan Iarikh Wa Mazhab, Quetta, Edarch Tadris, 1994, p. 259.

ձևավորման գործում, և «բելուջների ինքնությունը սերտորեն կապված էր միջցեղային հարաբերություններում բելուջերենի կիրառման հետ»: Չնայած գրեթե կես դար տևած բռնի ձուլման քաղաքականությանը, բելուջները կարողացել են պահպանել իրենց մշակույթը և պատմասացության բանավոր ավանդույթը: Կառավարությունների ուժեղ ճնշումները ամրապնդել են բելուջների՝ եկող սերունդներին իրենց ժառանգությունը փոխանցելու, կամքը: Բելուջերեն լեզուն բելուջների առանձին ինքնության ապացույցն ու խորհրդանիշն է, և զգալի ջանքեր են գործադրվում այն պահպանելու և զարգացնելու համար: Պակիստանում բելուջերենը սովորաբար դասակարգվում է արևմտյան և արևելյան բելուջերենի: Արևելյան բելուջերենը տարածված է Բելուջիստանի հյուսիսարևելյան շրջանում և Փենջաբի ու Սինդի նահանգների հարևան տարածքներում: Արևմտյան բելուջերենով խոսում են նահանգի արևմտյան և հարավային մասերում, ինչպես նաև Կարաչիում ու Սինդի այլ հատվածներում:

Չնայած փոքրաթիվ բնակչությանը՝ Բելուջիստանն ունի առանձնահատուկ ռասայական և ցեղային բազմազանություն: Քաղաքների և գյուղերի բնակչության մեծամասնությունը հասկանում և խոսում է ավելի քան երկու լեզվով: Բացի բելուջերենից, փուշթուերենից և բրահվիերենից, բնակչության ճնշող մասը հասկանում և խոսում է նաև ազգային լեզվով՝ ուրդուերենով: Կաչի և Սիբի շրջաններում ժողովուրդը խոսում է սերաիկերեն և սինդիերեն: Քվետտա քաղաքում՝ բոլոր լեզվական խմբերի հատման կետում, բնակվում են ոչ միայն ուրդուերեն, բելուջերեն, փուշթուերեն, բրահվիերեն և սինդիերեն, այլ նաև դարրիերեն և պարսկերեն խոսող մարդիկ:

Բելուջների մշակույթը մեծ հաշվով հակասում է դրա վերաբերյալ ընդհանուր ընկալմանը: Թեև Բելուջիստանն ամուլ հողերի, անապատների և լեռների տարածք է, մշակույթը հարուստ է ավանդույթներով, արվեստով և արհեստներով: Բելուջիստանը հայտնի է նաև իր ցեղերով և փառատոններով: Մշակույթի մյուս

առանձնահատկությունը պատմասացությունն է: Բանաստեղծներն ու պատմիչները վայելում են մեծ հարգանք: Ամուսնությունները տարբեր են և առանձնահատուկ դաշնային մակարդակում: Դրանք իրականացվում են ըստ իսլամական սկզբունքների՝ Մաուլանի և վկաների ներկայությամբ: Ամուսնությունները տեղի են ունենում երիտասարդ տարիքում, սակայն պլանավորվում են վաղ մանկության և նույնիսկ ծննդյան ժամանակ: Սիրով ամուսնությունների մակարդակը բավական ցածր է, քանզի դա չի խրախուսվում ցեղերի ներսում: Բաժանությունների թիվը փոքր է՝ ի տարբերություն Պակիստանի այլ նահանգների: Սակայն, հագուկապը, փառատոնները, երաժշտությունը, ուտելիքը և սպորտը գրեթե նույնն են, ինչ երկրի այլ նահանգներում:

Կառավարությունը և քաղաքականությունը

Բելուջիստանի կենտրոնական և ամենախոշոր քաղաքը Քվետտան է: Ինչպես Պակիստանի մյուս նահանգները, Բելուջիստանը նույնպես ունի կառավարման խորհրդարանական համակարգ: Նահանգի ղեկավարը նահանգապետն է, ում նշանակում է Պակիստանի նախագահը՝ նահանգի գլխավոր նախարարի խորհրդով: Վերջինս նահանգի գլխավոր գործադիրն է, ով, որպես կանոն, նաև խորհրդարանական ամենախոշոր կուսակցության կամ դաշինքի առաջնորդն է: Բելուջիստանի միապալատ խորհրդարանում կա 65 տեղ, որից 11-ը զբաղեցնում են կանայք, 3-ը՝ ոչ մահմեդականները: Կառավարության դատական իշխանությունն իրականացնում է Բելուջիստանի բարձրագույն դատարանը, որը գլխավորում է Գերագույն դատարանի նախագահը և տեղակայված է Քվետտայում: Նահանգն ունի 4 բաժանումներ, որոնք էլ իրենց հերթին բաժանված են 32 վարչական շրջանների:

1947թ. պետության ստեղծման պահից ի վեր Պակիստանի կառավարությունը պայքարում է Բելուջիստանի ցեղերի շրջանում առկա թշնամանքի դեմ: Բելուջիստանի հետ կոնֆլիկտի պատճառների թվում են հասունացած էթնիկ ազգայնականությունը

և տնտեսական ու քաղաքական օտարման զգացումը[35]: Թեև բելուջները կազմում են Պակիստանի ամբողջ բնակչության 3.6 տոկոսը, ռազմավարական առումով նահանգը չափազանց կարևոր է երկրի համար՝ բնական ռեսուրսների, մասնավորապես՝ գազի, նավթի, պղնձի և ոսկու, խիստ կենտրոնացածության պատճառով: Այդուհանդերձ, չնայած բնական ռեսուրսների առատությանը, Բելուջիստանը շարունակում է մնալ Պակիստանի ամենաաղքատ նահանգը: 1948թ. ապրիլի 1-ին Կալաթի գրավումից հետո նահանգում պարբերաբար տեղի էին ունենում ռազմական բախումներ: Պաշտոնյաների դաժան վերաբերմունքն արտահայտվում էր խոշտանգումներով, կամայական ձերբակալություններով և բռնություններով: Ուստի, բելուջներն ունեն առանձին ինքնության ընկալում՝ պատմության, լեզվի և մշակութային այլ առումներով: Բելուջների շրջանում այդ ընդհանուր մշակույթը հանգեցրել է ազգայնականության հասունացմանը՝ հիմքում ունենալով ավելի լայն քաղաքական ինքնավարություն և Բելուջիստան առանձին պետության ստեղծման գաղափար:

Բելուջ ազգայնականների ըմբոստությունների դեմ պայքար էր տարվում 1948թ., 1958-1959թթ., 1962-1963թթ., 1973-1977թթ., ինչը հասավ իր գագաթնակետին 2003թ.: Բելուջ անջատողականները պնդում են, որ Պակիստանի կենտրոնական կառավարությունը պարբերաբար խոչընդոտում է նահանգի զարգացմանը, մինչդեռ նրանց հակառակորդները պնդում են, որ միջազգային ներդրողները չեն ցանկանում ներդրումներ անել նահանգում շարունակական խռովությունների պատճառով[36]: Հինգ ապստամբություններից առաջինը տեղի ունեցավ 1948թ. ապրիլի 1-ին, երբ զինված ուժերը գրավեցին Կալաթը, և Յար Խանը՝ Կալաթի կառավարիչը, ստորագրեց դաշնության կազմ մտնելու պայմանագիր: Այդ ժամանակ Յար Խանի կրտսեր եղբայրներ՝ արքայազներ Աղա Աբդուլ Կարիմ Բելուջը և Մուհամմադ Ռահիմը, հրաժարվեցին վայր

[35] *The Indian Express*, August 18, 2016.
[36] **Kemp G.,** The East Moves West: India, China and Asia's Growing Presence in the Middle East, Brookings Institution, 2010, p. 116.

դնել զենքերը և մինչև 1950թ. շարունակեցին զինված ուժերի վրա հարձակումները:

Երկրորդ հակամարտությունը տեղի ունեցավ 1958-1959թթ. կառավարության «Մեկ միավոր» քաղաքականության դեմ, որը նվազեցրեց նրանց ներկայացուցչությունը կառավարության կազմում: Այդ պարտիզանական պատերազմը վարում էր Նավաբ Նաուրոզ Խանը և նրա հետնորդները: Նրանց ձերբակալեցին, մեղադրեցին դավաճանության մեջ և հետագայում մահապատժի ենթարկեցին: Լարվածությունը վերաճեց պարբերական քաղաքական անկարգությունների և անկայունության դաշնային մակարդակում: Շեր Մուհամմադ Բիջրանի Մառին առաջնորդում էր համախոհ զինյալներին 1963-1969թթ. պարտիզանական պատերազմում: Վերջինս ավարտվեց 1969թ., երբ բելուջ անջատողականները համաձայնեցին հրադադարի ռեժիմին: 1970թ. Պակիստանի նախագահ Յահյա Խանը վերացրեց «Մեկ միավորի» քաղաքականությունը, ինչը հանգեցրեց Բելուջիստանի՝ որպես Արևմտյան Պակիստանի չորրորդ նահանգի, ճանաչմանը: Չորրորդ կոնֆլիկտի ժամանակ (1973թ.), որն ուղեկցվում էր զինված ապստամբությամբ, Պակիստանի զինված ուժերը կորցրեցին 300-400 զինվոր, իսկ մեծ թվով բելուջ զինյալներ և խաղաղ բնակիչներ սպանվեցին: Ներկայիս կոնֆլիկտը սկսվել է 2004թ. Գվադար նավահանգստի վրա իրականացված հարձակումով: Ապստամբների պահանջների թվում են նահանգի ռեսուրսների նկատմամբ ավելի մեծ վերահսկողությունը և տարածքում ռազմաբազաների կառուցման վերաբերյալ մորատորիումը: Այդ համատեքստում Պակիստանը մեղադրում է Հնդկաստանին և երբեմն նաև Միացյալ Նահանգներին՝ բելուջ ապստամբներին աջակցելու համար:

Եզրակացություն և առաջարկություններ

Հակամարտության խորքային պատճառները պատմական և քաղաքական են: Սակայն այդ պատճառներից զատ, որոշ

սոցիալական գործոններ, այդ թվում՝ էթնիկ պատկանելությունը և կրոնը, ևս զգալի ազդեցություն են ունեցել հակամարտության շարունակականության վրա: Բելուջիստանի հակամարտության բնույթի և պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս աշխարհում ընթացող հակամարտությունների և այդ հակամարտության միջև մի շարք ընդհանրություններ: Այդ պատճառներից են անհավասարությունը, խտրականությունը, դժգոհությունը, սոցիալ-տնտեսական գործոնները, մարգինալացումը, ազատության, ժողովրդավարության և իրավունքի գերակայության բացակայությունը: Բելուջների դժգոհությունը դաշնության կազմում արտահայտվեց այն ժամանակ, երբ դաշնային կառավարությունը կենտրոնացրեց ամբողջ՝ այդ թվում՝ քաղաքական և սոցիալ-տնտեսական իշխանությունն իր ձեռքում: Ստեղծված միջավայրի արդյունքում բելուջները սկսեցին ընկալել դաշնային կառավարության վերաբերմունքն իրենց նկատմամբ որպես ամբողջությամբ շահագործող: Այդ համատեքստում Պակիստանին անդրադառնալիս կարևոր է նշել, որ առանց հաշվետվողականության, որն ապահովվում է կայուն զանգվածային քաղաքական մասնակցության ճանապարհով, պետությունը չի կարող լուծումներ առաջարկել բնակչության դժգոհությունների համար՝ կապված նահանգային ինքնավարության, բնական ռեսուրսների նկատմամբ վերահսկողության, կրթության մատչելիության և բնակչության հիմնական կարիքների հետ: Այդ տնտեսական, սոցիալ-քաղաքական և մշակութային դժգոհությունները բելուջների առավել մեկուսացված խմբերի շրջանում վերջին վեց տասնամյակներում էլ ավելի սրել է հակամարտությունը: Այսօր բելուջների դժգոհությունները պատճառ են դառնում, որ վերջիններս վերականգնեն իրենց էթնիկ-ազգայնական ինքնությունը՝ այդպիսով վիճարկելով Պակիստանի ազգայնականության գաղափարը:

Հակամարտությունների կարգավորումն աշխարհի ցանկացած տարածաշրջանում պահանջում է վերհանել դրանց խորքային պատճառներին, ինչը կարող է կանխարգելել

բռնությունը: Դրանք սովորաբար ծագում են հակամարտության տարածքում բնակվող ժողովրդի չբավարարված պահանջներից և կապված են կրոնական, էթնիկ, լեզվական կամ քաղաքական ինքնությունների հետ: Բելուջիստանի հակամարտությունը ևս ռեսուրսների բաշխման, իշխանության կենտրոնացման և ոչ ժողովրդավարական քաղաքական կառուցվածքի վերաբերյալ տարակարծությունների արդյունք է: Չափազանց կարևոր է, որպեսզի բելուջների պահանջները լինեն լսելի, հասկանալի և բավարարված: Այդ տեսանկյունից հակամարտության լուծման համար կարող են օգտակար լինել հետևյալ առաջարկությունները.

- Դաշնային կառավարությունը պետք է ապահովի Ազգային ֆինանսական հանձնաժողովի մրցանակի (NFC Awards), Աղազ-է-Հուքոք-է-Բելուջիստանի փաթեթի և 18-րդ սահմանադրական փոփոխության իրականացումն ու ոգին:
- Կառավարությունը պետք է ապահովի նահանգի անվտանգությունը:
- Բոլոր մեղադրյալները, ձերբակալվածները կամ անհայտ կորածները պետք է կամ ազատ արձակվեն, կամ կանգնեն դատարանի առաջ՝ Հաբեաս կորպուսի սկզբունքով:
- Պետք է պահպանվի իրավունքի գերակայությունը, ապօրինի ձերբակալությունները չպետք է թույլատրվեն:
- Տնտեսական հնարավորությունների հիմնական պահանջը պետք է բավարարվի:
- Պակիստան-Չինաստան տնտեսական միջանցքը և Գվադարը պետք է այդ ծրագրերում ներգրավեն տեղաբնակներին:

Ուստի, նույնիսկ այսօր պահանջների բավարարման վրա հիմնված լուծումն իրատեսական է: Ոչ թե թշնամու կերպարների կամ պիտակավորումների օգտագործումը, այլ պահանջների բավարարումը կարող է ապահովել գործընթացի հաջողությունը:

Fault Lines of Pakistan's Baluchistan Policy

RAJKUMAR SINGH
B.N.Mandal University, India

Increasingly, Baluchistan is coming under international focus and its tense relationship with the government of Pakistan. In fact, the nationalist forces of Baluchistan never accepted its integration in 1947-1948 with brute force and since then the Baloch people call their land an occupied area, leading to various insurgencies against Pakistan in the 1950s, 1960s and 1970s. The current phase of insurgency in the form of more vigorous movement for independence began in 2004, growing gradually and still continuing. In addition, Pakistan's Baluchistan is a poor land with rich natural resources such as gas, coal and other minerals with other important economic sectors which include fisheries, mining manufacturing industries, trade and other services. In contrast, Baluchistan has been called a "neglected province where a majority of people lacks amenities1. It has always been the poorest and least developed of all of Pakistan's provinces. The paper aims to highlight this contradictory position of Baluchistan which, to a large extent, has fuelled the overall dissatisfaction/alienation of the Baloch people from the parent country, Pakistan. There are several provinces, like Baluchistan, that gave a potential contribution to country's development but get a little in return. By examining the entire elements inside Baluchistan, it will be placed in a larger regional and global context. The case of Baluchistan contains far-reaching implications for the world but, in particular for the country and region.